

ԿԵՆՆՔԸ ԺԱՌՆԳԻ. ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

Երկուշաբթի, 4 Յունուարի կէսօրին, Ս. Ծնունդը — կամ Ծննդեան պահը — կանխող Առաք Տօներու սկզբնաւորութեան, աշակերտութիւնը սկսաւ ձմեռնային իր արձակուրդին, որ տեւեց մինչեւ 27 Յունուար, Զորեքշաբթի առաւօտ:

Հինգշաբթի, 7 Յունուարի երեկոյեան, Ս. Ստեփանոս Նախատարկաւորի առնին առթիւ, Վարժարանիս սեղանատան մէջ կայացաւ աւանդական ընթրիքը, որուն ներկայ եղան Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը և ուսուցչական կողմը: Վերադասուչ Գերշ. Տ. Շահէ Արքեպս. ի խօսքէն ետք հրաւիրուեցաւ Տիար Սահակ Գալայճեանը, որ յանուն ուսուցչական կողմին ընէ աւուր պատշաճի խօսքը, որմէ ետք Տիրացու Արամ Ալճառեան կարգաց ուղարձ մը՝ իր սարկաւազ եղբայրներուն կողմէ: Ապա Ստրկաւագ-Ուրարակիրներ երգեցին շնորհակալութեամբ շարականը: Ընթրիքը վերջ գտաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր փակման խօսքով և օրհնութեամբ:

Զորեքշաբթի, 13 Յունուարի երեկոյեան ժամը 7 ին, Ալեքս և Մարի Մանուկեան հանդիսատարին մէջ, Նոր Տարին դիմաւորուեցաւ աւանդական Նախաւորութեամբ: Ներկայ էր ամբողջ Միաբանութիւնը, գլխաւորութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, ուսուցիչներ և Ս. Աթոռայ պաշտօնականներ: Հանգէսը բացուեցաւ Վարժարանի Պայլերգով — «Մերա ի սիրտ» — երգուած յոսեկայս, որմէ ետք վերադասուչ Գերշ. Տ. Շահէ Արքեպս. ըրաւ բացման խօսքը, որտայտաւելով ժամանակի գաղափարին և դրան լաւագոյնս օգտագործելու կարեւորութեան մասին: Ժառ. Ժաներ, դաշնակի ընկերակցութեամբ Սան Վալէ Թաղաքեանի և առաջնորդութեամբ Երաժշտութեան ուսուցիչ Տիար Սահակ Գալայճեանի, խմբերգեցին Ազգ. Փառապանծը: Ժառ. Սան Շահան Էօզաէմիրեան ապրումով որոտանեց «Ո՛րք Մեաց» բանաստեղծութիւնը: Ուսանողութեան կողմէ խմբերգուած Գուրգէն Ալէմշտի «Հայաստան»-էն ետք, Ժառ. Ժաներ ներկայացուցին խիստ հետաքրքրական զանաւ մը՝ հօշակապար Սիմոն Աղայի Ծննդեան Տարեգրքը: Դերուսոյցն էր Տիար Ալեքս Գալայճեան: Ապա ընդհանուր ժողովին ու հետաքրքիր նայաւածքին ընդմէջէն սրան ժամանեց կողմնորդ Պապուկը, որ բազմելով որահին կեդրոնը, նախ կատարեց ընթերցումը բանասիր կաղանդէք-ներուն և յետոյ իր բերած նուէրի բաժնիներէն բաժնի հանեց բոլորին: Պատրիարք Ս. Հօր փակման խօսքով և օրհնութեամբ վերջ գտաւ ուրախալի այս երեկոյթը:

Հինգշաբթի, 21 Յունուարին, ուսանողները պատրաստեցին զէպի Մեռեալ Ժով, ուր շատ հաճելի ժամեր անցուցին: Վերադարձի ճամբուն վրայ, անոնք ելան Երիժովի Մոսակայքը գտնուող Փորձութեան լեռը և այցելեցին Յունաց վանքը:

տասխանեց նորապսակ Սրբազանը, իր գոհունակութիւնը յայտնելով վերստին Ս. Աթոռ գտնուելուն համար եւ հաղորդելով բոլորին Ն. Ս. Օծութեան հայրական ողջոյնները: Յետոյ Միաբանութեան հետ ըարծրացաւ Պատրիարքարան, Ն. Ամեն. Վօտ:

Գերշ. Տ. Աղան եպս. մէկ շաբաթ մնաց Ս. Աթոռ: Ժամանակն աղորդայնին, Վարդանանց տօնին, հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Մայր Տաճարի Առաք Սեղանին վրայ: Իսկ յաջորդ օրը գլխաւորեց զէպի Ասորւոց Վանք, տարեկան իրաւունքի Պատարագի մատուցման մեկնող Միաբանական Թափօրը: Եղաւ նաեւ խարտաւիլակը քահանայական ձեռնադրութեան:

Իր մեկնումի նախօրեակին (Գշ., 2 Մարտ), Սրբազանը, Հայ Երիտ. Միութեան սրահին մէջ, խիստ հետաքրքրաշարժ բանախօսութիւն մը տուաւ Յւստրալիոյ Հայ գաղութի կազմաւորման ու ներկայ վիճակի մասին:

Կը կրկնենք այս առթիւ մեր նախորդ համարին մէջ ըրած մաղթանքները, Առաք-Նորդ Սրբազան Հօր բարօր ու բեղմնաւոր պաշտօնավարութեան ի խնդիր:

Զորեքչարթի, 27 Յունուարին Գրպրոցի վերաբացումին հետ վերական առաւօտեան տասը վայրկեան տևող խորհրդածութեան պահերը Խորհրդածութիւնը առաջնորդեց Վերասահուղ Գրքը. Տ. Շահէ Արքեպ., ընդգծելով տող մը օրուան ձառնը ընթերցումէն և բացատրելով զայն աշակերտներուն, վերատեսչի բացակայած օրերուն, Տեսուչ Տ. Ներսէս Աւագ Գահանայն կատարեց նոյն պաշտօնը, Աստուածաշնչական հասկումը խօսքերը եղան յատուկ խորհրդածութեան առարկայ. —

- ա) Դշ. 27 Յուն. — Հիցեց զծառայա քր, Աստուած իմ, որ ի քեզ յուսացայ: Բ) Ուր. 29 Յուն. — Միայն կրթեա զանձն քո յաստուածաշնչութիւնն: Գ) Դշ. 3 Փետ. — Ար հաւատայ յորդի՝ ընդունի զկեանս յաւիտենականն: Դ) Եշ. 4 Փետ. — Հի որ փոքրիկն է յամենեան ի ձեզ՝ նո եղիցի մեծ: Ե) Ուր. 5 Փետ. — Տաղէ քեզ Տէր իմագրութիւն յամենայնի: Զ) Դշ. 9 Փետ. — Այս էն յաւիտենական կեանք, զի ժանիցեն զԲնդ միայն ճշմարիտ Աստուած, և զոր առաքեցերն զԹիսուս Գրիստոս: Է) Դշ. 10 Փետ. — Բայց ծառայի Տեառն ոչ է պարտ կոռել, այլ հեզ լինել առ ամենեան: Ը) Եշ. 11 Փետ. — Հիսնն զոր ես խօսեցայ ընդ ձեզ, հոգի է և կեանք: Թ) Ուր. 12 Փետ. — Հիք յամենայն ժամ ուսանին և երբեք ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանին: Ժ) Դշ. 16 Փետ. — Այկիցն իմաստութեան երկիւղ Տեառն: Ժա) Եշ. 18 Փետ. — Եւ ամենեքան որ կամիցին աստուածաշնչութեամբ կեալ ի Գրիստոս Յիսուս: Ժբ) Դշ. 23 Փետ. — Հի հանդէս ձերոց հաւատացն առաւել քան զսոսի կորստական՝ պատուական է որ հրով փորձեալ՝ դառա ի գովութիւն և ի փառս և ի պատիւ յայտնութեանն Յիսուսի Գրիստոսի: Ժգ) Դշ. 24 Փետ. — Եւ եմ լոյս աշխարհի:

Երկու երկուշարթիներու խօսողներ եղան Վարժարանի ուսուցիչներէն Հոգշ. Տ. Սեան Վրդ. Զարկեան և Հոգշ. Տ. Ասպետ Վրդ. Գալեան:

Ըր. 6 Փետրուարի երկուշիւան, ունեցանք Ս. Վահան Գողթնացիի յիշատակին (որուն տունը զուգադիպած էր երկու օրեր առաջ) նուիրուած երկույթ, կազմակերպուած Վարժարանի Բարձրագոյն Դասարանի Տիրացուներուն կողմէն Տեսուչ Արժ. Տ. Ներսէս Աւագ Գիւյ. Ճէպէճեան բացաւ երկույթը, խօսելով մարտիրոսութեան գաղափարի մասին, աստուաւորելով խօսքը օրուան սուրբին, Տրց. Արամ Ալեանեան մենեքեց սուրբին ձօնուած Հարմանալի է ինձ շարականն առաջին տունը: Տրց. Սարգիս Թաւադեան կարգաց Յայտնութեան սուրբին ձօնուած հատուած մը, Ժառանգ. Եան Սուրեն Ներսէսեան կարգաց Հարմանալի է ինձ շարականը, աշխարհաբար Թարգմանութեամբ միտանդ: Տրց. Արամ և Տրց. Սարգիս արտասանեցին Եղիպիթի՝ սուրբին ձօնուած քերթումէն հատուածներ: Տեսուչ Տէր Հայրը ամփոփ կերպով պատմեց սուրբին կեանքը Ժառանգաւորներուն հասկնալի լեզուով և փակեց երկույթը Հրահանիչով:

Ետքաթ, 13 Փետրուարի երկուշիւան, Ս. Սարգիս զօրավարի տունին քաղթով, ունեցանք սուրբին յիշատակին նուիրուած երկույթ: Առաջին դասարանի աշակերտները խմբովին երգեցին սուրբին ձօնուած Համենասուրբ Երրորդութեանն շարականը, Ապա Ժառ. Եան Սարգիս Պայման արտասանեց Նիշէ Գաբրիէլ Դուրեանի Հետէն եկուրք քանդակողութիւնը: Տրց. Արամ Ալեանեան կարգաց սուրբին վարած կենցաղին և մարտիրոսութեան մասին: Դասախօսեց Վերահասուչ Սրբազանը, որ օրութեան գաղափարի մասին խօսելէ ետք, ոգեկոծեց ուսանողութիւնը, անոնց մէջ ձերբուծելով արքայութեան, նորաստեղծութեան և քրիստոնէութեան ոգին:

Ետքաթ, 20 Փետրուարի երկուշիւան, նոյն եօթնեակին զուգադիպած Սուգիւս

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Եր. 2 Յուն. — Ս. Արգառու քաղ. մերոյ: Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Գլխադէր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայրիկ Արեղայ:

● Գիր. 3 Յուն. — Ս. Գատարազը՝ ի Ս. Յապոր, Ս. Կարապետի խորանին վրայ մատոյց Հոգշ. Տ. Համարածում Արղւ: Ս. Բ. Վարժաւրանի աշակերտութիւնը Հաղորդուեցաւ:

● Բշ. 4 Յուն. — Ամեն. Սրբ. Գատրիարը Հայրը նախագահեց հանդիսաւոր նախատեսնակին, որմէ ետք թափօրով և փրկեցեց ըզտէր: Ս. Աթոռոյ շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Գատրիարքարան:

● Գշ. 5 Յուն. — Դարի մարգարէն և Յակոբայ Տեառնեղբոր (Տօն Առաքելական Ս. Արսոյոյ Երուսաղէմի): Առաւօտեան ժամերգութեան տանն, Ամեն. Ս. Գատրիարը Հայրը զգեստաւորեալ բարձրացաւ Տեառնեղբոր Աթոռի պատուանդանին: Աւագ Սեղանին վրայ հանդիսաւորապէս պատարագեց և քարոզեց Գերշ. Տ. Կիւսքեց Եղւ: Լուսարարապետ Արքայաւորը նախագահեց հանդիսեալ պատարագը և երգչներուն համար կատարուած անշուստեան կար ին:

● Դշ. 6 Յուն. — Ամեն. Ս. Գատրիարը նախագահեց Ս. Յաւփանտի նախատեսնակին: Բարձրաւանդի Հայրերն էին Հոգշ. Տ. Կոմիտաս և Հոգշ. Տ. Արփիար Արեղաներ:

● Եշ. 7 Յուն. — Ս. Ասկիանօսի նախավանդին: Առաւօտեան կատարուեցաւ Սարկազազեց Հանդէսը: Ներկայ էր Ամեն. Ս. Գատրիարը Հայրը: Ս. Գատարազը Աւանդատան մէջ մատոյց Հոգշ. Տ. Սեւակ Վրդ. Ղարիբեան:

● Ուր. 8 Յուն. — Նախատեսնակին ի Ս. Յապոր նախագահեց Գերշ. Տ. Նորայր Արքեպոս:

● Եր. 9 Յուն. — Ասաթ. Գեղոսի և Պօղոսի: Ս. Գատարազը՝ Ս. Գեղոսի վերին մատուակի մէջ մատոյց Արժ. Տ. Ներսէս Ա. Գն. ձեպէնեան:

● Կիր. 10 Յուն. — Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Յարուսթին, մեր վերնամատարն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Վրդւ:

— Կ. վ. Ամեն. Ս. Գատրիարը Հայրը Նրաւափառով մուտք գործեց Մայր Տանար, և նախատեսնակին ետք թափօրով զարմարացաւ Գատրիարքարան:

● Բշ. 11 Յուն. — Տօն Ս. Որդուցն Ռոմամ և Բարեկ. պահոց Ս. Եմնղեան: Լուսարարապետ Տ. Դարեգին Արքեպո. հանգիստաւորապէս պատարագեց Ս. Գլխադէր մատարան մէջ և քարոզեց: Ապա ամպնովանի տակ և Կենաց Փայտի մատուանքի ի ձեռնին նախագահեց Մայր Տանարին մէջ կատարուած եւագարձ թափօրին: Յետոյ բոլորն ալ նշան Գատրիարքարան և Գատարազի Սրբապանէն քաջան-որնուած նշխար:

● Եշ. 14 Յուն. — Կազմեղ: Մայր Տանարի Աւագ Սեղանին վրայ պատարագեցեց և քարոզեց (տես էջ 33), ըստ սովորութեան, ժամօրինոց Հոգշ. Տ. Ռուբէն Վրդւ: Յետոյ բոլորն ալ բարձրացան Գատրիարքարան, ուր Լուսարարապետ Սրբապանը՝ Կ. գրմաց Միաբանութեան, շնորհաւորեց Ս. Գատրիարը Հայրը: Ս. Բ. Մանկողարտեղէն փոքրիկներ նայել ըրին: Ն. Ամեն. փոխադարձեց և պատան խօսքերէ ետք մէկական նարին ըամենց բոլորին:

● Եր. 18 Յուն. — Ս. Բարսղի հայրապետին: Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Գլխադէր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Արղւ:

● Կիր. 17 Յուն. — Ս. Գատարազը մատուցուեցաւ ի Ս. Յապոր, Ս. Աճանայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայրիկ Արղւ:

● Բշ. 18 Յուն. — Ճրգալոյց Ս. Եմնղեան: Կ. տ. ժամը 10ին, Ամեն. Ս. Գատրիարը Հոր զընխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժեալ շարանով մը ճամբայ ելաւ զէպի Թեթի, զենեմի Դիմաւորութիւնը կատարուեցաւ նախարարութիւնը և հոգիաւորութեամբ ի պայծառ ու գաղշ օգով:

տանց վկայից և Ոսկեանց քանանայից տաներուն առթիւ, աւնեցանք անոնց յիշատակին նուիրուած երկերոյթ: Տրց. Արամ Այնանեան մենեղեց «Ստուգութեամբ» (Ստեղծութեան) ստեղծ շարականի առաջին տունը: Ժառ. Եան Եանին Խօղտէմիբեան կարգաց «Որք արժանաւորեցոյթ» (Ոսկեանց) շարականը՝ աշխարհաբար թարգմանութեամբ հանդերձ: Ժառ. Եան Եանին սուղբեան սուղբերդեց «Հանդիսացեալ» շարականը: Տրց. Արամ կարգաց գրուածք մը՝ նուիրուած սուրբերուն: Օրուայ դասախօսն էր Վարժարանի ուսուցիչներէն Հոգշ. Տ. Արփիար Արղւ. Տէմիբեան, որմէ ետք վերատեսուել Ս. Հայրը ըրաւ փակձան խօսքը և օրնուց աշակերտութիւնը:

Հինգշաբթի, 25 Փետրուարի երկույան, Ս. Վարդանանց զօրավարաց տանին առթիւ, Վարժարանի ճաշարանին մէջ տեղի ունեցաւ աւանդական ընթերցը, նախագահութեամբ Ամեն. Ս. Գատրիարը Հոր և ի ներկայութեան Միաբանութեան անդամներուն և ուսուցչական կազմին: Վերանուարեց Գերշ. Տ. Եան Արքեպո. ի բաց՝ իսկ խօսքէն ետք՝ Ժառանգաբար փոքրիկ տաներ խճովին երգեցին տանին շարժականը՝ ճաշարանէ ապակաւոր: Ապա մեծեք երգեցին սուր հայրենիաց հոգի, Վարդան և Եր. որմէ ետք, յանուն աւանդական կազմին, խօսք առաւ Տիար Վարդան Տէր Վարդանեան: Ընթերցը փակուեցաւ Սրբապան Գատրիարը Հոր խրախուսիչ խօսքերով և օրնուցութեամբ: